ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերում փոփոխություններ կատարելու մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2026 թվականի մարտի 24-ի թիվ 1.2 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը ՍԱՊ-ԳՀԾՁԲ-26/06

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կարիքների համար «Իրավական խորհրդատվության ծառայություններ» ձեռք բերելու նպատակով կազմակերպված ՍԱՊ-ԳՀԾՁԲ-26/06 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

Փոփոխության առաջացման պատճառ՝ Հրավերի տեխնիկական բնութագրի մեջ տեղի էր ունեցել բացթողում:

Փոփոխության նկարագրություն՝ Հրավերի տեխնիկական բնութագրի մեջ ավելացվել է հետևյալ պայմանը՝ ՊՈԱԿ-ում Կատարողի ներկայացուցիչը պետք է ներկա լինի առնվազն շաբաթական 2 աշխատանքային օր, յուրաքանչյուր օրը առնվազն 4 ժամով: Կատարողի ներկայացուցիչը ՊՈԱԿ-ում գտնվելու օրերը նախապես պետք է բանավոր համաձայնեցնի Պատվիրատուի կամ նրա ներկայացուցչի հետ:

Փոփոխության հիմնավորում՝

“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդված, ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 14-րդ կետի 2-րդ ենթակետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՍԱՊ-ԳՀԾՁԲ-26/06 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Սիրանուշ Խանզադյանին:

Հեռախոս՝ 0261-2-40-44:
Էլ.փոստ՝ sevansnco@env.am
Պատվիրատու՝ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ: